

Դաւելթ էսաց. — Տղէնիւր, էջէբ տակ:

Դաւելթ ձէն չըն լսի:

64. Դաւելթ մէկ էլ կաղաչի. — էջէբ տակ ազիւց:

Կասըն. — Ըստե մի քէֆ կանընք, վրէ կիջնէնք տակ:

Զըն գիտի Դաւելթ ձեռ կը ցար, որ չըն էջնի տակ:

Դաւելթ կըռըկի, զծառ բաց կը թուզնը:

Էգա տղէնիւր ամէն մէկ կերթայ մէկ եանէն կընկը գետըն:

Որ կըյնըն գետըն, ամենն էլ կը մեռնըն:

65. Ձէն կերթայ քաղքը մէջ, խապար կտան. — Շոտ խա-
սէք, ձի աղէք յըմեն մեռան:

Յըմեն մարդ ուր տնէն ըլաւ, վազից, էսաց. — Շոտ խաս-
նիմ իմ աղը հաւարին ¹, էոտ ինչ բանի որ էկաւ:

Կերթան, համա չըն հաւատաց:

66. Եկան խառան տղէնիւրաց, տըստն մարդիւր յըմեն թա-
փած ի էգա տեղ:

Յառաջ շոտ որ գինացիւր ի, էգա տղէնիւրու ջանտիւր
յըմեն ժողուած ի. ամին խէք ուր աղը վերայ նստիւր ի, լաց
կըլնը:

67. Կանչըն մէկ տղայ բերըն խարցուամ էըն:

— Տղա, գիւ խ սղատեղն իր: Կոաց. — խա:

— Մի տղէնիւր սր սպանից: Կոաց. — Դաւելթ սպանից:

— Վրէ, մի դու շման էր Դաւելթ:

Կոաց. — Ձէ. էգա ծառ կը տիսնէք:

— Սո, կը արսնանք, ասըն:

— Էգա ծառ կոռըց, իրի գետըն, յեմենն ըլան վերայ.
ուրինց խամա կը խաղէն. մինըն էլ տաս-քտան աղայ գետն
կը խաղէնք, Դաւելթ էոաց. «էջէբ տակ», էէջան տակ. ահանջ
չէըն, Դաւելթ զծառ բաց ի թուզ. տղէնիւր բանձրցան գըպան
գետըն. գնացընք մէջ, ձեռ որ տուընք, մեռիւ էն, մինք էլ
էկանք քետաղք, ձի խապար տուընք:

68. Մէկ մէկ ուր տղէն վերուց, լալեօլ իրի տուն:

Վիւր ախպէր կէր, վիւր քիւր կէր, վիւր խէր կէր, էկան,
էգա տղէնիւրու վերայ լացըն, շատ լացըն:

Իտիւիւն ճամբիւն տէրտէր բերըն, պատարագ էըն, տա-
րըն խուրըն:

69. Յըմեն ժողնուան, յիւրիւր ասըն.

— Մինք տէրթանք, Դաւելթն տսպանիւք: Դաւելթ վրէ մի
տղէնիւր սպանից:

1 Թուրք. — Օգնու թիւն: